

Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 18-ի N 1326 - Ն որոշման

«Հավելված N 9
ՀՀ կառավարության 2018 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1467-Ն որոշման

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ
ՆՎԱԶԵՑՎՈՂ ԹԱՐՄ ԿԱՐՏՈՖԻԼԻ, ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԵՎ ՊՏՈՒՂՆԵՐԻ
ՏԱՐԲԵՐ ՏԻՊԻ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ
ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում են հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող թարմ կարտոֆիլի, բանջարեղենի և պտուղների բնական կորուստների չափերը, որոնք հետևանք են դրանց պահպանման ժամանակ դրանցում պարունակվող ջրի գոլորշացման:

2. Սույն հավելվածի կիրառության իմաստով բնական կորուստների մեջ չեն մտնում այն կորուստները, որոնք առաջանում են ապրանքի փչանալու, տարայի վնասվելու հետևանքով, ինչպես նաև խոտանը և թափոնները, որոնք առաջանում են ապրանքի ստացման, վերամշակման և փաթեթավորման հետևանքով:

3. Սույն հավելվածով սահմանված բնական կորուստների չափերը տարածվում են տարբեր տիպի պահեստներում պահպանման դրված թարմ կարտոֆիլի, բանջարեղենի և պտուղների վրա: Ընդ որում՝

1) չստեցվող պահեստներին են վերաբերում կարտոֆիլի պահեստը, բանջարեղենի պահեստը և մրգերի պահեստը բնական կամ ակտիվ օդափոխմամբ, դրանց համար նախատեսված պահեստները կամ նկուղները, ինչպես նաև բաց

տարածությունները, եթե այդտեղ մթերքը պաշտպանված է տեղումներից, արևահարումից, լույսից և ցրտից՝ դրանք պահպանելով տարբեր միջոցներով (պոլիմերային թաղանթով, բրեզենտով, վահանակներով և այլն)։

2) սառեցվող պահեստների շարքին են պատկանում արհեստականորեն պաղեցվող պահեստները և տարածքները։

4. Սույն հավելվածով սահմանված բնական կորուստների չափերը չեն տարածվում հետևյալ ապրանքների վրա՝

1) որոնք ստացվում և հանձնվում են առանց կշռման.

2) պահեստի շրջանառության մեջ գտնվող, սակայն փաստացի պահեստից բացակայող (տրանզիտային գործողություններ)։

5. Սույն հավելվածով սահմանված չափերը համարվում են սահմանային և գործածվում են միայն պակասորդ հայտնաբերելու դեպքում։ Բնական կորուստների նախնական դուրսգրում չի թույլատրվում։

6. Լոլիկի հասունացման շրջանում կիրառվում են բնական կորուստների հետևյալ չափերը՝ ամռանը՝ 0,5 տոկոս, աշնանը՝ 0,4 տոկոս յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելի, քան 4 տոկոս մինչև հասունացման ավարտը։ Սույն կետով սահմանված չափերը գործածվում են միայն ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից լոլիկի հասունացման համապատասխան ակտի ձևակերպմամբ։

7. Բանանի պահպանման և հասունացման շրջանում կիրառվում են բնական կորուստների հետևյալ չափերը՝ 0,5 տոկոս յուրաքանչյուր օրվա համար, բայց ոչ ավելի, քան 3 տոկոս մինչև հասունացման ավարտը։ Սույն կետով սահմանված չափերը գործածվում են միայն ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից բանանի հասունացման համապատասխան ակտի ձևակերպմամբ։

**II. ԹԱՐՄ ԿԱՐՏՈՖԻԼԻ, ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԵՎ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՏԻՊԻ
ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ**

8. Թարմ կարտոֆիլի, բանջարեղենի և պտուղների պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերն են (տոկոսներով քանակության նկատմամբ)՝

Ապրանքի անվանումը	Պահեստի տիպը	Ամսական կորստի չափը, %
Կարտոֆիլ	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,7
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,8
	Բուրտեր, խրամատներ	0,4
Ճակնդեղ, ամսաբողկ, բողկ, կոլրափի, ստեպլին	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,6
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,7
	Բուրտեր, խրամատներ	0,5
Գազար, մաղադանոս, նեխուր, շաղգամ	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,7
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,8
	Բուրտեր, խրամատներ	0,4
Կաղամբ՝ սպիտակագլուխ, կարմրագլուխ, սավոյան, բրյուսելյան և ծաղկակաղամբ (միջահաս)	Առանց արհեստական սառեցման պահեստներ	2,3
	Արհեստական սառեցմամբ պահեստներ	1,3

Կաղամբ՝ սպիտակագլուխ, կարմրագլուխ, սավոյան, բրյուսելյան և ծաղկակաղամբ (ուշահաս)	Առանց արհեստական սառեցման պահեստներ	1,4
Մոխ	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,5
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,6
Մխտոր	Արհեստական սառեցմամբ պահեստներ	1,0
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	1,1
Դդում	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,3
Իսնձոր (աշնանային սորտ)	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,4
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,5
Իսնձոր (ձմեռային սորտ)	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,25
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,3
Տանձ և սերկևիլ	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,4
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	0,5
Իսադող	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,4
Ծիրան, դեղձ, կեռաս, բալ, հոն, սալոր, նուռ	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,6

Հատապտուղներ՝ ելակ, հաղարջ, փշահաղարջ, ազնվամորի, մոշ, լոռամիրգ, հապալաս, ծորենի, չիչխան, մասուր	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,2
Սունկ՝ թարմ բոլոր տեսակների	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,8
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	1,0
Արքայախնձոր	Արհեստական սառեցմամբ պահեստներ	0,9
	Առանց արհեստական սառեցման պահեստներ	1,0
Նարինջ, մանդարին, կիտրոն, թուրինջ, կիվի	Արհեստական սառեցման պահեստներ	0,03

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ